

**ԹԱԼԱԹ ԹԵՓԵՆ ԸՆԴԴԵՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ
ԳՈՐԾՈՎ ՎՃՈՒ
ՀԱՄԱՌՈՏ ՇԱՐԱԴՐԱՆՔԸ**

**ԸՍՏ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
21-Ի ՎՃՈՒ**

2006 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍ
«ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ» ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
<<http://www.legalguide.am>>

Թալաթ Թեփեն ընդդեմ Թուրքիայի գործով վճռի համառոտ շարադրանքը «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության համար կազմել է Արման Ալոյանը, ով էլ լիովին պատասխանատու է դրա բովանդակության համար: Աշխատանքի մշակմանն աջակցել է Հայաստանի Հանրապետությունում Միացյալ Թագավորության և Հյուսիսային Իռլանդիայի դեսպանատունը:

Աշխատանքը կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից:

© 2006 «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպություն: Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:

ԹԱԼԱԹ ԹԵՓԵՆ ԸՆԴԴԵՍ ԹՈՒՐՔԻԱՅԻ
2004 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ՎԵՒՈՐ

ԳՈՐԾԻ ՓԱՍՏԵՐԻ ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՍՆԱՌՏԱԳԻՐ

Պարոն Թալաթ Թեփեն (դիմումատուն) Թուրքիայի քաղաքացի է, ազգությամբ քուրդ, ծնվել է 1961 թվականին և ապրում է Ստամբուլում: 1992 թվականի օգոստոսի 6-ին ոստիկանությանը Քրդական բանվորական կուսակցության (այսուհետ՝ ՔԲԿ) երկու անդամների տված ցուցմունքների հիման վրա, Դիարբեքիրի Պետական անվտանգության դատարանի հանրային դատախազը ահաբեկչական կազմակերպությանն օժանդակելու մեղադրանքով հինգ անձանց, ներառյալ դիմումատուին, ձերբակալելու մասին որոշում կայացրեց: Դատախազի այդ որոշման մեջ խոսք էր գնում ՔԲԿ-ի կողմից իրականացված մի շարք ահաբեկչությունների, այդ թվում նաև Հերսանի ոստիկանության բաժանմունքի վրա կատարված հարձակման մասին:

1995 թվականի հուլիսի 9-ին, դիմումատուն ահաբեկչական կազմակերպությանն օժանդակելու մեղադրանքով ձերբակալվեց Ստամբուլի Աթաթուրքի օդանավակայանում և բերման ենթարկվեց Ստամբուլի Գայրետտեպեյի Դատական ակտերի հարկադիր կատարման վարչություն:

1995 թվականի հուլիսի 11-ից դիմումատուն իր կալանքը կրում էր Ստամբուլի անվտանգության վարչությունում:

1995 թվականի հուլիսի 17-ին դիմումատուին զննեց Ստամբուլի Հասեկի հիվանդանոցի բժիշկը: Իր զեկույցում բժիշկը նշեց, որ դիմումատուի մարմնի վրա վնասվածքներ չեն հայտնաբերվել:

1995 թվականի հուլիսի 18-ին դիմումատուն տեղափոխվեց Բիթլիսի անվտանգության վարչություն: 1995 թվականի հուլիսի 20-ին Դիարբեքիրի պետական անվտանգության դատարանի դատավորը նրան մինչև դատական նիստն ազատ արձակելու մասին որոշում ընդունեց:

1995 թվականի նոյեմբերի 24-ին նրան մեղադրանք առաջադրվեց Քրեական օրենսգրքի 31-րդ և 169-րդ հոդվածներով և Ահաբեկչության կանխման մասին թիվ 3713 օրենքի 5-րդ հոդվածով:

1996 թվականի հունիսի 6-ին Դիարբեքիրի Պետական անվտանգության Դատարանը կարճեց քրեական գործով վարույթը՝ բավարար ապացույցներ չլինելու հիմքով: Դիմումատուն կալանքի տակ պահվեց տասներկու օր:

Կալանքի տակ գտնվելու ընթացքում Պարոն Թալաթ Թեփեն երկու անգամ բժշկական զննության ենթարկվեց, իսկ ազատ արձակվելուց հետո՝ 1995 թվականի հուլիսի 23-ին, նրան զննեց մեկ այլ բժիշկ: Ստորև բերված է 1995 թվականի օգոստոսի 15-ին կազմված բժշկական զննության եզրակացությունից մի հատված.

«... Նա [դիմումատուն] Բիթլիսում մոտ 40 ժամ ենթարկվել է ֆիզիկական և հոգեբանական խոշտանգումների: Նա հարցաքննվել է լրիվ մերկ վիճակում: Նրան պահել են քարե հատակ ունեցող կեղտոտ և ցուրտ խցում: Նա զուգարանից և հիգիենիկ այլ պարագաներից օգտվելու սահմանափակ իրավունք է ունեցել: Նրան վիրավորել են և իր հետ վատ են վարվել: Դիմումատուին սպառնացել են սպանել: Նա գտնվել է հոգեբանական ճնշման տակ, որը հանգեցրել է հուսալքության և ապահովության զգացումի կորստի (նրան հաճախ ասել են թե իրեն կդատեն և հետո կդատապարտեն մահապատժի. նույնիսկ ազատ արձակվելու դեպքում իրեն կսպանեն և այլն): Հարցաքննության ընթացքում նրան չորսից հինգ անգամ ծեծել են: ...

նրան վեց անգամ ենթարկել են էլեկտրական շոկի ...: Նրան ուշքի էին բերել սառը ջրով...: Ընդհանուր առմամբ նա ենթարկվել է այնպիսի խոշտանգումների, որոնք վտանգել են տուժողի կյանքը և պատճառել ծայրահեղ ցավ, սակայն միշտ չէ, որ մարմնի վրա հետքեր են մնացել...»:

Թալաթ Թեփեն ընդդեմ Թուրքիայի գործով հանգամանքների և վարույթների ժամանակագրությունը բերված է ստորև Աղյուսակում:

Աղյուսակ

| ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԱՏՅԱՆՆԵՐՈՒՄ | |
|---|--|
| 1995 թվականի հուլիսի 12 | Դիմումատուի փաստաբանները Արդարադատության նախարարին բողոք ներկայացրեցին դիմումատուի կալանքի երկարատևության վերաբերյալ: |
| 1995 թվականի հուլիսի 18 | Ներքին գործերի նախարարը խնդրեց Ստամբուլի Հանրային Դատախազին քննության առնել դիմումատուի փաստաբանների ներկայացրած բողոքը: |
| 1995 թվականի օգոստոսի 17 | Ստամբուլի Հանրային դատախազը դիմումատուից ցուցմունքներ վերցրեց: Դիմումատուն բողոքում էր իր կալանքի ժամկետի երկարատևության առումով, ինչպես նաև քննադատում էր Ստամբուլի Պետական անվտանգության դատարանին կից Հանրային դատախազին, ով իր կալանքի ժամկետը երկարացնելու մասին անօրինական որոշում էր կայացրել: Բացի դրանից, նա պատմեց Բիթլիսում իր նկատմամբ ցուցաբերված վատ վերաբերմունքի մանրամասները: Նա տվեց նաև երկու ոստիկանների նկարագրությունը, ովքեր իր պնդմամբ պատասխանատու էին այդ արարքի համար: Նա նշեց, որ 1995 թվականի հուլիսի 20-ին իրեն զննած բժիշկը ոչ մի հարց չի տվել և միայն արտաքին զննում է կատարել: Ինչևէ, նա պնդեց, որ խոշտանգումները, որոնց ինքը ենթարկվել էր, այնպիսի բնույթ չունեին, որպեսզի պարտադիր կերպով հետքեր թողնեին մարմնի վրա: Բացի այդ, նա չէր կարողացել իր բողոքները ներկայացնել բժշկին, քանի որ զննության ընթացքում սենյակում ներկա էին նաև ոստիկանները: Դիմումատուն նաև նշեց, որ Դիարբեքիի Պետական անվտանգության դատարանում եղած գործի նյութերից բացի, չունի որևէ այլ ապացույց կամ վկա, որ կհաստատեն իր պնդումները: |
| 1996 թվականի սեպտեմբերի 8 | Բիթլիսի Անվտանգության վարչությունը Բիթլիսի Հանրային դատախազին հայտնեց դիմումատուին օդանավակայանից Անվտանգության վարչություն ուղեկցած և դիմումատուի կալանքի տակ գտնվելու ընթացքում նրան հարցաքննած ոստիկանների անունները: |
| 1995 թվականի սեպտեմբերի 14 | Հինգ ոստիկաններ բերվեցին Բիթլիսի Հանրային դատախազի մոտ: Հանրային դատախազին տված իրենց ցուցմունքներում բոլոր հինգ ոստիկանները ժխտեցին դիմումատուի պնդումները: |
| 1996 թվականի հունվարի 8 | Բիթլիսի Հանրային Դատախազը որոշեց, որ ոստիկանների նկատմամբ վարույթի իրականացումն իր իրավասությունների մեջ չի մտնում: Նա գործի նյութերն ուղարկեց Բիթլիսի քաղաքապետին: |
| 1996 թվականի ապրիլի 18 | Բիթլիսի Մարզային խորհուրդը որոշեց այդ հինգ ոստիկաններին մեղադրանք չառաջադրել հիմնավորելով, որ դիմումատուն հարցաքննվել է 1995 թվականի հուլիսի 19-ին և բժշկական զննության ենթարկվել Բիթլիսի Պետական հիվանդանոցում 1995 թվականի հուլիսի 20-ին. նույն օրը կազմված բժշկական եզրակացության համաձայն դիմումատուի մարմնի վրա հարվածի հետքեր չեն հայտնաբերվել, իսկ դիմումատուն 1995 թվականի հուլիսի 20-ին ազատ էր արձակվել Դիարբեքիի պետական անվտանգության դատարանի որոշմամբ: Խորհուրդը հետևաբար որոշեց, որ նա չի ենթարկվել խոշտանգումների: |

| | |
|-----------------------|--|
| 1998 թվականի մարտի 18 | Դատարանը վերահաստատեց Խորհրդի որոշումը վճռելով, որ չկան դիմումատուի պնդումները հաստատող ապացույցներ առ այն, որ ոստիկանները կատարել են ենթադրյալ հանցագործությունը: |
|-----------------------|--|

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

Ա. Քրեական օրենսդրությունը և վարույթը

Թուրքիայի Քրեական օրենսգիրքը (*Türk Ceza Kanunu*) սպանությունների վերաբերյալ նախատեսում է դրույթներ, որոնք վերաբերվում են անզգույշ սպանությանը (452 և 459 հոդվածներ), դիտավորյալ սպանությանը (հոդված 448) և սպանությանը (հոդված 450): Թուրքիայի քրեական դատավարության օրենսգրքի (*Türk Ceza Muhakemeleri Usulü Kanunu*; այսուհետ՝ «ԹՔԴՕ») 151-րդ և 153-րդ հոդվածների համաձայն այդ հանցագործությունների վերաբերյալ բողոքները կարող են ներկայացվել հանրային դատախազին: Բողոքը կարող է ներկայացվել գրավոր կամ բանավոր: Բողոքը բանավոր ներկայացնելու դեպքում այն պետք է արձանագրվի գրավոր կերպով (ԹՔԴՕ-ի 151-րդ հոդված): Հանրային դատախազը և ոստիկանությունը պարտավոր են հետաքննություն իրականացնել իրենց հայտնի դարձած հանցագործությունների կապակցությամբ (ԹՔԴՕ-ի 153-րդ հոդված):

Եթե կան ապացույցներ ենթադրելու որ մահը վրա է հասել ոչ բնական ճանապարհով, ոստիկանության և այլ հանրային ծառայողները, ովքեր տեղեկացվել են այդ փաստի մասին տեղեկացնել հանրային դատախազին կամ քրեական դատարանի դատավորին (ԹՔԴՕ-ի 152-րդ հոդված): Քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի համաձայն, յուրաքանչյուր հանրային ծառայող, ով ոստիկանությանը կամ հանրային դատախազությանը չի տեղեկացրել հանցագործության մասին, ինչի վերաբերյալ իրեն հայտնի է դարձել իր ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում, դատապարտվում է ազատազրկման:

Հանրային դատախազը, ով ցանկացած ձևով տեղեկացվել է այնպիսի իրավիճակի մասին, որը հիմք է տալիս կասկածելու, որ կատարվել է հանցագործություն, պարտավոր է հետաքննություն իրականացնել այդ փաստի կապակցությամբ՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելով կատարողներին հայտնաբերելու ուղղությամբ (ԹՔԴՕ-ի 153-րդ հոդված): Հանրային դատախազն կարող է որոշում կայացնել քրեական գործով վարույթ հարուցելու մասին, եթե նա գտնում է, որ առկա ապացույցները հաստատում են կասկածյալին ներկայացված մեղադրանքը (ԹՔԴՕ-ի 163-րդ հոդված): Եթե կասկածյալի դեմ եղած ապացույցները բավարար չեն քրեական գործով վարույթի հարուցումը հիմնավորելու համար, հարային դատախազը կարող է ավարտել հետաքննությունը: Ինչևէ, հանրային դատախազը կարող է հետաքննությունը ավարտելու մասին որոշում ընդունել միայն ապացույցների ակնհայտ անբավարարության հիմքով:

Քրեական գործով բողոքը ներկայացնելուց հետո, այն ներկայացնող անձն իրավունք ունի բողոքարկել քրեական վարույթ չհարուցելու մասին հանրային դատախազի որոշումը: Բողոքը կարող է բերվել այն ներկայացնող անձին հանրային դատախազի որոշման մասին ծանուցվելուց հետո տասնհինգ օրվա ընթացքում (ԹՔԴՕ-ի 165-րդ հոդված):

Բ. Վարչական պատասխանատվության վերաբերյալ Սահմանադրական դրույթները

Թուրքիայի Սահմանադրության 125-րդ հոդվածի 1-ին և 7-րդ կետերը սահմանում են հետևյալը:

«Վարչական մարմինների որոշումները ենթակա են դատական վերահսկողության ...

Իշխանությունները պատասխանատու են իրենց ակտերով կամ գործողություններով պատճառված բոլոր վնասների հատուցման համար»:

Այս դրույթը ենթակա չէ սահմանափակման նույնիսկ պատերազմի կամ արտակարգ իրավիճակի պայմաններում: Երկրորդ մասը չի պահանջում ապացույց վարչական մարմնի որևէ մեղքի առկայության մասին, որի պատասխանատվությունը կրում է բացարձակ օբյեկտիվ բնույթ՝ հիմնված կոլեկտիվ պատասխանատվության կոնցեպցիայի վրա և որը հայտնի է որպես «սոցիալական ռիսկի» տեսություն: Հետևաբար, վարչական մարմիններին կարող են դիմել նաև անձինք, ովքեր վնաս են կրել անհայտ անձանց կամ ահաբեկիչների կողմից կատարված արարքների հետևանքով, երբ պետությունը, կարելի է ասել, չի կատարել հասարակական կարգը և անվտանգությունը պաշտպանելու կամ անհատների կյանքը և սեփականությունը պահպանելու իր պարտականությունը:

...

ՕՐԵՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

39. Դիմումատուն բողոքում էր, որ կալանքի տակ գտնվելու ընթացքում, ինքը ոստիկանների կողմից ենթարկվել է խոշտանգումների ու նրա նկատմամբ վատ վերաբերմունք է ցուցաբերվել, ինչը խախտում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածը, որի համաձայն.

«Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:»

40. Դիմումատուն պնդում էր, որ 1995 թվականի հուլիսի 23-ին ազատ արձակվելուց հետո ինքը բժշկական զննություն է անցել անկախ բժշկի մոտ: Եզրակացությունը կազմվել էր զննությունն անցկացնելուց քսաներեք օր անց, քանի որ բժիշկը ստիպված սպասել էր մի քանի անալիզների պատասխաններին:

41. 1995 թվականի հուլիսի 20-ի բժշկական զննության եզրակացության առնչությամբ, դիմումատուն բողոքում էր, որ չնայած ինքը պարբերաբար ընդգծել է այդ եզրակացության ոչ պատշաճ լինելու հանգամանքը, Կառավարությունը չի հարցաքննել զննություն իրականացրած բժշկին կամ այլ պաշտոնյաների, ովքեր ներկա են գտնվել զննությանը:

42. Նա բողոքում էր, որ Դիարբեքիրի Պետական անվտանգության դատարանը կարճել էր քրեական գործով իր նկատմամբ հարուցված վարույթը այն հիմքով, որ ոստիկանությանն ինքը ցուցմունքներ է տվել ճնշման ազդեցության ներքո: Հետևաբար, նույնիսկ Պետական անվտանգության դատարանն ինքն է ընդունել իր խոշտանգումների ենթարկված լինելու հանգամանքը:

43. Դիմումատուն նաև առարկում էր, որ չնայած 1995 թվականի հուլիսի 20-ի բժշկական զննության եզրակացության իր քննադատությանը, հետաքննիչի եզրակացությունը

գլխավորապես հիմնված էր այդ զեկույցում տեղ գտած հետևություններին: Նա բողոքում էր, որ ինքը հնարավորություն չի ունեցել իր կարծիքը հայտնել ոստիկանների տված ցուցմունքների վերաբերյալ: Ավելին, եզրակացությունը կազմած հետաքննիչն անկախ չէր կասկածյալներից:

44. Կառավարությունն առարկում էր, որ դիմումատուն չի ներկայացրել 1995 թվականի հուլիսի 20-ի բժշկական զննության զեկույցի ոչ պատշաճ լինելու վերաբերյալ իր պնդումը հաստատող ոչ մի ապացույց:

45. Կառավարությունը եզրակացրեց, որ 1995 թվականի օգոստոսի 15-ի բժշկական զեկույցը, որը դիմումատուն ներկայացրել էր որպես խոշտանգումների վերաբերյալ իր մեղադրանքների հիմնավորում, ավելի շատ նկարագրում էր ենթադրաբար ցուցաբերված վատ վերաբերմունքի մանրամասները դիմումատուի ֆիզիկական վիճակը նկարագրելու փոխարեն: Ավելին, զեկույցը պատրաստվել էր դիմումատուին ազատ արձակելուց գրեթե մեկ ամիս անց: Չնայած դիմումատուն պնդում էր որ բժշկական զննությունը անց է կացվել 1995 թվականի հուլիսի 23-ին, չկա որևէ փաստ որը կհաստատի այս պնդումը:

46. Կառավարությունը նաև առարկում էր, որ ի հակադրություն դիմումատուի ենթադրությունների, Դիարբեքիի պետական անվտանգության դատարանի կողմից իր նկատմամբ հարուցված քրեական գործի վարույթի կարճման պատճառը ոստիկանությանը ներկայացված իր ոչ արժանահավատ փաստերը չէին: Ինչպես նշված է դատարանի վճռում, նրա նկատմամբ հարուցված քրեական գործով վարույթը կարճվել է, քանի որ դատարանը հիմնավոր կասկածից վեր չի համարել որ դիմումատուն մեղավոր է իրեն առաջադրված մեղադրանքներում:

47. Դատարանը նշեց, որ 3-րդ հոդվածը երաշխավորում է ժողովրդավարական հասարակության առավել հիմնարար արժեքներից մեկը: Նույնիսկ ամենածանր իրավիճակներում, ինչպես օրինակ ահաբեկչության ու կազմակերպված հանցավորության դեմ պայքարն է, Կոնվենցիան բացարձակ կերպով արգելում է խոշտանգումը, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը: Ի տարբերություն Կոնվենցիայի և դրան կից 1-ին և 4-րդ Արձանագրություններով սահմանված նյութական նորմերի մեծ մասի, 3-րդ հոդվածը բացառություններ չի սահմանում և 15-րդ հոդվածով չի թույլտարվում որևէ շեղում այդ հոդվածից պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ (տե՛ս Սելնոունին ընդդեմ Ֆինլանդիայի գործով Եվրոպական դատարանի որոշումը [GC] թիվ 25803/94, կետ 95 ՄԻԵԿ 1999-V, և Ասսենովը և այլոք ընդդեմ Բուլղարիայի գործով 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, Վճիռների ու որոշումների զեկույցներ 1998-VIII, էջ 3288, կետ 93):

48. Դատարանը այնուհետև հիշատակեց իր նախորդ վճիռները այն առումով, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման մասին գանգատներում ներկայացված փաստերի գնահատման համար սահմանել է «ողջամիտ կասկածից վեր» ապացուցման չափանիշը (տե՛ս Այսարն ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանի թիվ 25657/94 վճիռը, կետ 282, ՄԻԵԿ 2001-VII): Նման ապացուցումը, այնուամենայնիվ, կարող է բխել բավականին ուժեղ, հստակ և համապատասխան կասկածի գոյությունից կամ էլ նմանատիպ անվիճելի փաստերի կանխավարկածից (տե՛ս Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 1978 թվականի հունվարի 18-ի վճիռը, Շարք Ա թիվ 25, կետ 65, մաս 161):

49. Դատարանը զգուշություն է ցուցաբերում իր առաջադրանքի օժանդակ բնույթի նկատմամբ և ընդունում է, որ պետք է զգուշություն ցուցաբերի իրեն՝ առաջին ատյանի դատարանի դեր վերապահելուց, այն դեպքերում, երբ կոնկրետ գործի փաստերով դա անխուսափելի չէ (տե՛ս, օրինակ, Մքքեռն ընդդեմ Միացյալ Թագավորության 2004

թվականի ապրիլի 4-ի գործով Եվրոպական դատարանի որոշումը, թիվ 28883/95): Չնայած դրան, Կոնվենցիայի 3-րդ հոդվածով խախտումների վիճարկման դեպքերում, ինչպես որ սույն գործում է, Դատարանը պետք է մասնավորապես խորը ուսումնասիրություն կատարի (տե՛ս, *mutatis mutandis*, Ռիբիչն ընդդեմ Ավստրիայի գործով Եվրոպական դատարանի 1995 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, Շարք Ա թիվ 336, մաս 32):

50. Սույն գործով, դիմումատուի պնդման համաձայն իր նկատմամբ դրսևորված վատ վերաբերմունքը ներառում է մի կողմից՝ ծեծը, էլեկտրական շոկը, սառը ջուր վրան լցնելը, և մյուս կողմից աչքերը կապած պահելը, բանավոր կերպով հասցված վիրավորանքները, լրիվ մերկ վիճակում պահելը, առանց սնունդ պահելը, մահվան սպառնալիքի ենթարկելը: Այնուամենայնիվ, սույն գործի որոշ հանգամանքներ կասկած են հարուցում արդյոք Բիթլիսի Անվտանգության Վարչությունում կալանքը կրելու ընթացքում դիմումատուի նկատմամբ ցուցաբերվել էր 3-րդ հոդվածով արգելված վերաբերմունք:

51. Նախ, 1995 թվականի հուլիսի 20-ին կազմված բժշկական եզրակացության համաձայն դիմումատուի մարմնի վրա վատ վերաբերմունքի դրսևորման հետքեր չեն հայտնաբերվել: Դատարանը տեղյակ է այս հաշվետվությունում տվյալների բացակայության մասին: Չնայած դրան, Դատարանը նաև նշում է, որ Դիմումատուն բավարար փաստեր չի ներկայացրել որոնք թույլ կտան վիճարկել եզրակացությունում նշված եզրահանգումները և հաստատել իր մեղադրանքները:

52. Երկրորդ, Դատարանը նշեց, որ խոշտանգումների վերաբերյալ դիմումատուի ներկայացրած մեղադրանքները հաստատող միակ ապացույցը 1995 թվականի օգոստոսի 15-ին կազմված բժշկական եզրակացությունն է: Դատարանը նշեց, որ Կառավարությունը մատնացույց էր արել այդ եզրակացությունում տեղ գտած մի շարք անհամատասխանություններ: Չթերազնահատելով այդ եզրահանգումների լրջությունը, Դատարանը չի կարող հաշվի չառնել այն փաստը, որ դիմումատուի ներկայացրած ապացույցը ստանդարտ բժշկական եզրակացություն չի հանդիսանում: Եզրակացությունում բացակայում են մի քանի կարևոր տեղեկություններ, ինչպիսիք են բժշկական հաստատության անվանումը, բժշկի դիպլոմի համարը: Ավելին այն չի նշում թե արդյոք դիմումատուն իրականում ենթարկվել է զննության բժշկի կողմից, եթե այո, ապա ինչ չափով, երբ և որտեղ:

53. Երրորդ, Դատարանը հիմք է ընդունել այն փաստը, որ դիմումատուն այդ բժշկական եզրակացությունը ներպետական որևէ մարմնի չի ներկայացրել, ոչ էլ նշել է դրա մասին հետաքննիչին և հանրային դատախազին տված իր ցուցմունքներում: Իսկապես տարօրինակ է, որ դիմումատուն ներպետական իշխանություններին չի ներկայացրել միակ ապացույցը, որը կհաստատեր իր մեղադրանքները և թույլ կտար օգտվել ներպետական օրենսդրությամբ նախատեսված իրավական պաշտպանության միջոցներից:

54. Արդյունքում, քանի որ իր վարույթում առկա ապացույցները հնարավորություն չեն տալիս հիմնավոր կասկածից վեր որոշել, արդյոք դիմումատուն ենթարկվել է վատ վերաբերմունքի, Դատարանը հաստատված չհամարեց, որ առկա է 3-րդ հոդվածի խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

55. Դիմումատուն բողոքում էր, որ իր կալանքը խախտում էր Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի (c) ենթակետի և 3-րդ կետի պահանջները, որոնք սահմանում են հետևյալը.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

...

с. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար.

3. Սույն հոդվածի 1-ին կետի «с» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով:»

Ա. Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի (с) ենթակետը

56. Դիմումատուն բողոքում էր, որ իրեն ձերբակալելու համար բավարար կասկածներ չկային և որ իր կալանքը անօրինական էր: Նա պնդում էր, որ ՔԲԿ-ն երկու անդամները իր դեմ ցուցմունքներ էին տվել 1992 թվականին, իր ձերբակալումից ավելի քան երեք տարի առաջ: Հետագայում այդ ցուցմունքները դատավարությունից առաջ հերքվել էին կասկածյալների կողմից, այն հիմքով որ դրանք տրվել էին ճնշման ներքո: Բացի դրանից, դիմումատուն բողոքում էր, որ ինքը հարցաքննվել է ոստիկանության կողմից, չնայած, Արդարադատության նախարարության 1994 թվականի փետրվարի 14-ի շրջաբերականի համաձայն, հանցագործության կատարման մեջ մեղադրվող փաստաբանի հարցաքննությունը պետք է իրականացնեն հանրային դատախազը:

57. Կառավարությունը պնդում էր, որ երկու կասկածյալներն էլ մանրամասն նկարագրել էին Բիթլիսում Հերսանի ոստիկանության բաժանմունքի վրա ՔԲԿ-ն անդամների իրականացրած հարձակումը, որին օժանդակել էր դիմումատուն: Չնայած կասկածյալները հերքել էին իրենց ցուցմունքները, պնդելով, որ դրանք տրվել էին ճնշման ներքո, նրանց իրարից տարբերվող ցուցմունքների առկայությունը չի կարող վերացնել դիմումատուի հանդեպ եղած հիմնավոր կասկածները:

58. Դատարանը կրկին նշեց, որ կասկածի «հիմնավորությունը» ինչի հիման վրա պետք է իրականացվի ձերբակալումը, հանդիսանում է 5-րդ հոդվածի 1-ին կետի (с) ենթակետով նախատեսված կամայական ձերբակալման ու կալանքի բացառման կարևոր երաշխիքներից մեկը: Հիմնավոր կասկած ունենալը ենթադրում է այնպիսի փաստերի կամ տեղեկատվության առկայություն, որը կողմնակի դիտորդին կհավաստիացնի, որ տվյալ անձը կատարել է հանցագործությունը (տե՛ս Լաբիտան ընդդեմ Իտալիայի գործով Եվրոպական դատարանի վճիռը [GC], թիվ 26775/95, մաս 155, ՄԻԵԿ 2000-IV): Հիմնավորությունը գնահատելիս հաշվի են առնվում գործի բոլոր հանգամանքները (տե՛ս Քենբելը և Հարթլին ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 1990 թվականի օգոստոսի 30-ի վճիռը, Շարք Ա թիվ 182, էջ 16, կետ 32):

59. Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի с ենթակետով սահմանված հիմնավոր կասկածը չի նշանակում, որ կասկածյալի մեղքը պետք է պարտադիր ապացուցվի վարույթի այդ փուլում: Հետաքննություն իրականացնող մարմնի խնդիրն է ապացուցել մեղադրյալի նկատմամբ հարուցված մեղադրանքների իրական լինելն ու դրանց բնույթը (Տե՛ս Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 1994 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, Շարք Ա թիվ 300-Ա, կետ 27, մաս 55): Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի с ենթակետը չի ենթադրում, որ ոստիկանությունը պետք է ունենա

բավարար փաստեր մեղադրանք առաջադրելու համար, ինչպես ձերբակալության, այնպես էլ դիմումատուի կալանքի տակ լինելու դեպքերում (Տե՛ս Էրդազյոզն ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանի 1997 թվականի հոկտեմբերի 22-ի վճիռը, Ձեկույցներ 1997-VI, էջ 2314, կետ 51):

60. Ավելին, ազատության յուրաքանչյուր սահմանափակում ոչ միայն պետք է իրականացվի ներպետական օրենքի նյութական և դատավարական նորմերին համապատասխան, այլ նաև միևնույն ժամանակ պետք է համապատասխան լինի 5-րդ հոդվածի նպատակին, այն է՝ մարդուն կամայական կալանավորումից պաշտպանելուն (ի թիվս այլ աղբյուրների Տե՛ս Չահալն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 1996 թվականի նոյեմբերի 15-ի վճիռը Ձեկույցներ 1996-V, կետ 1864, մաս 118):

61. Սույն գործով, Դատարանը նկատեց, որ դիմումատուն կալանքի էր ենթարկվել ահաբեկչական կազմակերպությանը օժանդակելու և աջակցելու կասկածանքով: Ոստիկանությունը գործել էր Դիարբեքի Պետական անվտանգության դատարանին հանրային դատախազի կողմից տրված որոշման հիման վրա: Կալանքի ենթարկելու մասին որոշումը հիմնված էր ՔԲԿ-ն երկու անդամների կողմից նախկինում տրված տեղեկատվության վրա: Դատարանը նշեց, որ չնայած կասկածյալները հերքել էին 1992 թվականին տված իրենց ցուցմունքները, պնդելով, որ դրանք տրվել էին ճնշման ներքո, նրանց իրարից տարբերվող ցուցմունքների առկայությունը չի կարող վերացնել դիմումատուի հանդեպ եղած հիմնավոր կասկածները և չեն ազդում կալանքի ենթարկելու որոշման օրինականության վրա:

62. Դատարանը, հաշվի առնելով գործի հանգամանքները և այն փաստը, որ դիմումատուի ձերբակալումն իրականացվել է ներպետական օրենքին համապատասխան, վճռեց, որ 5-րդ հոդվածի 1-ին կետի (c) ենթակետի խախտում առկա չէ:

Ինչ վերաբերում է դիմումատուի այն պնդմանը, որ իրեն կալանքի ենթարկելու ընթացակարգը ներպետական օրենսդրության տեսանկյունից անօրինական էր, քանի որ ինքը չի հարցաքննվել հանրային դատախազի կողմից, Դատարանը ցանկանում է ավելացնել, որ Արդարադատության նախարարության 1994 թվականի փետրվարի 14-ի շրջաբերականը միայն անդրադառնում է այն հարցին, թե ինչպես պետք է իրականացվի իրավաբանների կողմից ենթադրաբար կատարված իրավախախտումների հետաքննությունը (տե՛ս Էլչին և այլոք ընդդեմ Թուրքիայի գործով 2003 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 23145/93 և 25091/94 վճիռը, 584-586 կետեր): Այն փաստը, որ դիմումատուն կալանքի տակ գտնվելու ընթացքում այդ շրջաբերականի պահանջների ենթադրյալ խախտմամբ հարցաքննվել է ոստիկանության կողմից, չի վերացնում նրա փաստացի ձերբակալման ու դրան հետևող կալանքի՝ ներպետական օրենսդրությամբ նախատեսված իրավական հիմքերը: Դատարանը նշեց, որ դիմումատուն ձերբակալվել և կալանքի է ենթարկվել հանրային դատախազի որոշման հիման վրա, և նրա կալանքի ժամկետը երկարացվել է հանրային դատախազի թույլտվությամբ (համենատիր, Էլչին և այլոք ընդդեմ Թուրքիայի գործով վերը նշված վճիռը, 674-684 կետերը):

63. Վերը նշվածի լույսի ներքո, Դատարանը եզրակացրեց, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում առկա չէ:

Բ. Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետ

64. Դիմումատուն բողոքում էր, որ ինքը կալանքի տակ է պահվել տասներկու օր՝ առանց դատավորի կամ օրենքով դատական իշխանություն իրականացնելու իրավասությամբ օժտված այլ պաշտոնատար անձի մոտ տարվելու:

65. Կառավարությունը առարկում էր, որ դիմումատուի կալանքի տևողությունը համապատասխանում էր դեպքի հանգամանքները տեղի ունենալու ժամանակ գործող օրենսդրության պահանջներին: Դիմումատուի պնդումները անհիմն են, քանի որ համապատասխան օրենքը փոփոխվել էր Դատարանի վճիռների հետևանքով:

66. Դատարանը վերահաստատեց, որ 5-րդ հոդվածը, հիմնականում, նպատակ ունի պաշտպանել անհատին Պետության կողմից նրա ազատության իրավունքին կամայական միջամտությունից: 5-րդ հոդվածի 3-րդ կետը նպատակ ունի բացառել կամայականությունը և ապահովել օրենքի գերակայությունը գործադրի նկատմամբ՝ դատական վերահսկողության պահանջ սահմանելով (տե՛ս Սակիկը և այլոք ընդդեմ Թուրքիայի գործով 1997 թվականի նոյեմբերի 26-ի վճիռը, Ձեկույցներ 1997-VII, էջ 2623, կետ 44):

67. 5-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջների համաձայն դատական վերահսկողությունը պետք է իրականացվի անհապաղ (տե՛ս Դե Յոնգը, Բալետը և Վան դե Բրինկն ընդդեմ Նիդեռլանդների գործով 1984 թվականի մայիսի 22-ի վճիռը, Շարք Ա, թիվ 77, 24-25 էջեր, 51-52 կետեր): Այնուամենայնիվ «անհապաղ» տերմինի մեկնաբանության ու կիրառման ճկունության սահմանները շատ սահմանափակ են (Տե՛ս Բրոգանը և մյուսներն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 1988 թվականի նոյեմբերի 29-ի գոչծով վճիռը, Շարք Ա թիվ 145-B, էջ 33-34, կետ 62):

68. Դատարանն ընդունեց, որ ահաբեկչությունների գործերով հետաքննությունը որոշ դեպքերում, անկասկած, իշխանությունների համար հատուկ խնդիրներ է առաջացնում (տե՛ս Բրոգանը և մյուսներն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վերը նշված վճիռը, էջ 33, կետ 61, Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի վերը նշված վճիռը, էջ 27 կետ 58, Աքսոյն ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանի 1996 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռը, Ձեկույցներ 1996-VI, էջ 2282, կետ 78, և Դեմիրը և մյուսներն ընդդեմ Թուրքիայի գործով 1998 թվականի սեպտեմբերի 23-ի գործով Եվրոպական դատարանի վճիռը, Ձեկույցներ 1998-VI, էջ 2653, կետ 41): Այնուամենայնիվ, սա չի նշանակում, որ ցանկացած դեպքում երբ հղում է կատարվում ահաբեկչության առկայությանը, հետաքննության մարմինները քարտ բլանշ ունեն 5-րդ հոդվածի իմաստով հարցաքննության համար ձերբակալելու կասկածյալին՝ առանց ներպետական դատարանների և վերջապես Կոնվենցիայի վերահսկող մարմինների արդյունավետ հսկողության առկայության (Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի վերը նշված վճիռը, էջ 27 կետ 58):

Դատարանը նշեց, որ դիմումատուն ուստիկանությունում կալանքի տակ էր պահվել 1995 թվականի հուլիսի 8-ից 20-ը: Դատարանը հիշեցրեց, որ Բրոգանը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճռում ինքը վճռել է, որ ուստիկանությունում չորս օր և վեց ժամ առանց դատական վերահսկողության կալանքի տակ մնալը չի համապատասխանում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված ժամկետային խիստ սահմանափակումներին, նույնիսկ, եթե դրա նպատակը հանրությանը որպես ամբողջություն, ահաբեկչության վտանգից պաշտպանելն է եղել (տե՛ս վերն արդեն հիշատակված Բրոգանը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճիռը էջ 33, կետ 62):

69. Չնայած, որ ահաբեկչությունների գործերով հետաքննությունը, անկասկած, իշխանությունների համար հատուկ խնդիրներ է առաջացնում, Դատարանը չի կարող ընդունել, որ դիմումատուին առանց դատական վերահսկողության տասներկու օր կալանքի տակ պահելն անհրաժեշտ է եղել:

70. Հետևաբար, Դատարանը գտավ, որ առկա է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:

Գ. Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետ.

71. Դիմումատուն Կոնվենցիայի 13-րդ հոդվածի հիման վրա բողոքում էր, որ հնարավորություն չէր ունեցել վիճարկելու իր կալանքի օրինականությունը և տևողությունը: Դատարանն այն կարծիքի է, որ դիմումատուի բողոքն այս մասով պետք է քննարկվի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի ներքո, որը սահմանում է հետևյալը.

«Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է»:

72. Դատարանը վերահաստատեց, որ ներպետական իրավական պաշտպանության միջոցների առկայությունը պետք է բավարար չափով հստակ լինի, այլապես չի ապահովվի 5-րդ հոդվածի 4-րդ մասով պահանջվող մատչելիությունը և արդյունավետությունը (ի թիվս այլ աղբյուրների, տե՛ս Վան Դրուզենբրոեքն ընդդեմ Բելգիայի գործով Եվրոպական դատարանի 1982 թվականի հունիսի 24-ի վճիռը, Շարք Ա, թիվ 50, էջ 30, կետ 54, Դե Յոնգը, Բալյետը և Վան դեն Բրինկն ընդդեմ Նիդեռլանդների գործով Եվրոպական դատարանի վերը նշված վճիռը, էջ 19, կետ 39 և Յագչին ու Սարգինն ընդդեմ Թուրքիայի գործով 1995 թվականի հունիսի 8-ի Եվրոպական դատարանի վճիռը, Շարք Ա, թիվ 319-Ա, էջ 17, կետ 42):

73. Դատարանը կրկին նշեց, որ Սակիկը և այլոք ընդդեմ Թուրքիայի գործով իր վճռում (1997 թվականի նոյեմբերի 26-ի վճիռը, Ձեկույցներ 1997-VII, կետ 53) չէր հաստատվել, որ գործի հանգամանքները տեղի ունենալու ժամանակ Պետական անվտանգության դատարանում գոյություն չունեի ներպետական իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, որի միջոցով դիմումատուն կարող էր վիճարկել իր կալանքի օրինականությունը: Դատարանը սույն գործով այլ եզրահանգման հանգեցրեց որևէ պատճառ չգտավ (տե՛ս նաև Դակիլիչն ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանի 2002 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 25756/94 վճիռը): Ինչ վերաբերում է մինչև դատավորի մոտ տարվելը դիմումատուի կալանքի տակ մնալու ժամկետին, այն է՝ տասներկու օրվան, Դատարանը ավելացրեց, որ այս ժամանակահատվածը, որը իրավաչափ էր ներպետական օրենսդրության տեսանկյունից, չի բավարարում 5-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված «անհապաղ» հասկացության պահանջներին (տե՛ս վերը նշված Սակիկը և այլոք ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանի վճիռը, կետ 51):

74. Վերոգրյալն ամփոփելով, Դատարանը եզրակացրեց, որ առկա է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

75. Դիմումատուն բողոքում էր, որ Թուրքական իշխանությունները խախտել են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը քանի որ Թուրքիայի իշխանությունները խոշտանգումների վերաբերյալ արված իր պնդումների առնչությամբ անաչառ և անկախ դատարանի առջև վարույթ չեն հարուցել. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համապատասխան դրույթն ունի հետևյալ բովանդակությունը՝

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ... ունի ... դատարանի կողմից ... արդարացի ... դատաքննության իրավունք ...»:

76. Դատարանը նկատում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա բերված դիմումատուի բողոքը, անքակտելիորեն կապված է նրա հիմնական բողոքի հետ, որը վերաբերում հետաքննություն իրականացնող մարմինների կողմից իր կալանքի քննության եղանակին և իր նկատմամբ ցուցաբերված վատ վերաբերմունքին ու ներպետական իրավական պաշտպանության միջոցներին մատչելիության իր հնարավորության վրա դրանց ազդեցությանը: Դատարանը ընդունելի գտավ քննել այս բողոքը 13-րդ հոդվածով պետության վրա դրված առավել ընդհանուր պարտականության՝ Կոնվենցիայի նորմերի խախտումների առնչությամբ իրավական պաշտպանության արդյունավետ միջոց ապահովելու, իմաստով:

77. Հետևաբար, Դատարանը անհրաժեշտ չհամարեց որոշում կայացնել այն հարցի կապակցությամբ, թե արդյոք առկա է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում թե ոչ:

IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 13-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

78. Դիմումատուն բողոքում էր, որ իր կալանքի անօրինականության և խոշտանգման վերաբերյալ իր ներկայացրած պնդումների առումով ներպետական օրենսդրությամբ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ չեն եղել, ինչը առաջացնում է Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում, որը սահմանում է հետևյալը.

«Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

79. Դատարանն արդեն քննել է դիմումատուի կալանքի օրինականությունը վիճարկելու առումով ներպետական իրավական պաշտպանության միջոցների անարդյունավետության հետ կապված իր բողոքները՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի իմաստով, ինչը հանդիսանում է *lex specialis* կալանքի հետ կապված վարույթների առնչությամբ:

80. Իր նկատմամբ խոշտանգումներ կիրառելու մեղադրանքների առնչությամբ ներպետական իրավական պաշտպանության միջոցների անարդյունավետության մասին դիմումատուի բողոքի կապակցությամբ Կառավարությունը պնդում էր, որ առկա էին ներպետական իրավական պաշտպանության միջոցներ: Ավելին, Կառավարությունն նշում էր, որ դիմումատուն Գերագույն Վարչական դատարանին չի բողոքարկել Տարածքային Վարչական Խորհրդի որոշումը, չնայած ուներ իրավունք և հնարավորություն դա անելու: Կառավարությունը նշում էր, որ Գերագույն վարչական դատարանը գործը քննել էր *ex officio* և վճռել, որ առկա չեն կալանքի տակ գտնվելու ընթացքում դիմումատուի նկատմամբ վատ վերաբերմունք դրսևորելու լինելու մասին իր մեղադրանքները հաստատող ապացույցներ:

81. Դատարանը վերահաստատեց, որ 3-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի բնույթը ունի 13-րդ հոդվածի որոշակի դրսևորումներ: Այն դեպքերում երբ անձն ներկայացնում է վիճելի գանգատ այն մասին, որ ինքը պետական մարմինների կողմից ենթարկվել է խոշտանգումների կամ խիստ վատ վերաբերմունքի, ապա «արդյունավետ իրավական պաշտպանության միջոց» հասկացությունը, ի լրացումն, համապատասխան դեպքերում արդարացի փոխհատուցման վճարման, ներառում է բազմակողմանի և արդյունավետ հետաքննությունը, որի արդյունքում հնարավոր կլինի մեղավորներին ենթարկել պատասխանատվության և հնարավորություն կտրվի բողոք ներկայացնողին արդյունավետ

կերպով ծանոթանալու հետաքննության ընթացքին (տե՛ս Աքսոյն ընդդէմ Թուրքիայի գործով վերը նշված վճիռը, կետ 98):

82. Դատարանը նաև նշեց, որ խոշտանգումների և վատ վերաբերմունքի ցուցաբերման վերաբերյալ մեղադրանքներով Պետական պաշտոնյաների կողմից իրականացված վարույթների արդյունավետության համար անհրաժեշտ է, որ հետաքննություն իրականացնող անձինք անկախ լինեն նրանցից ովքեր ներգրավված են այդ խոշտանգումների և վատ վերաբերմունքի ցուցաբերման դեպքերին: Սա նշանակում է, որ պետք է բացակայի ոչ միայն հիերարխիկ կամ ինստիտուցիոնալ կապը, այլ պետք է գործնականում առկա լինի անկախություն (տե՛ս, Օգյուրն ընդդէմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանի վճիռը [GC], թիվ 21594/93, մաս 91, ՄԻԵԿ 1999-III):

83. Արդյունքում Դատարանը վճռեց, որ իր վարույթում առկա ապացույցները հնարավորություն չեն տալիս հիմնավոր կասկածից վեր որոշել, արդյոք դիմումատուն ենթարկվել է վատ վերաբերմունքի, թե՛ ոչ: Չնայած Դատարանի նախորդ վճիռներին, 3-րդ հոդվածի հիման վրա բերված բողոքը չէր դադարում «վիճարկելի» լինել 13-րդ հոդվածի նպատակներով (տե՛ս Յասան ընդդէմ Թուրքիայի գործով 1998 թվականի սեպտեմբերի 2-ի վճիռը, Չեկույցներ 1998-VI, էջ 2442, կետ 112):

84. Դատարանը նշեց, որ Բիթլիսի Հանրային դատախազի կողմից հարուցված գործի նյութերը «Քաղաքացիական ծառայողների նկատմամբ քննության իրականացման մասին» օրենքի պահանջներին համապատասխան փոխանցվել են Բիթլիսի քաղաքապետին: Հետաքննությունն իրականացրել է Բիթլիսի Սարգային խորհուրդը, որը որոշեց, որ ոստիկաններին մեղադրանք չի կարող առաջադրվել: Դատարանը կրկին հղում կատարեց իր նախորդ վճիռներին և նշեց, որ Վարչական խորհրդի կողմից իրականացված հետաքննությունը չի կարող համարվել անկախ, քանի որ խորհուրդը ղեկավարվում է կառավարիչների կամ նրանց տեղակալների կողմից և կազմված է գործադիր իշխանության տեղական ներկայացուցիչներից, ովքեր կախում ունեն կառավարիչներից (ի թիվս այլ աղբյուրների տե՛ս, վերը նշված Օգյուրն ընդդէմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանի վճիռը, մաս 91, Յոյլերն ընդդէմ Թուրքիայի գործով 2003 թվականի հուլիսի 24-ի թիվ 26973/95, վճիռը, կետ 93, և Կուրտն ընդդէմ Թուրքիայի գործով 2003 թվականի հունիսի 12-ի թիվ 37038/97 որոշումը):

85. Այդ առումով, դիմումատուին ներկայացրած մեղադրանքների առնչությամբ իրականացված հետաքննությունը չի կարող համարվել արդյունավետ և անկախ այնքան, որպեսզի բավարարի 13-րդ հոդվածի պահանջներին:

86. Հետևաբար առկա է Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում:

V. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 14-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

87. Դիմումատուն պնդում էր, որ ենթարկվել է խտրականության ազգությամբ քուրդ լինելու հիմքով, ինչը առաջացնում է Կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում, որը սահմանում է հետևյալը.

«Սույն Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ ... ազգային կամ սոցիալական ծագումից, [կամ] ազգային փոքրամասնությանը պատկանելուց ...»:

88. Դիմումատուն նշեց, որ կալանքի ընթացքում իր հարցաքննությունը հիմնականում կենտրոնանում էր քրդերի և ՔԲԿ-ն վրա: Նա պնդում էր, որ այդ հարցաքննության արդյունքը

կայանում էր որոշակի քաղաքական կարծիք ունենալը և որոշակի ազգային փոքրամասնությանը պատկանելը պատժելի դարձնելու մեջ:

89. Վարույթում եղած ապացույցների և գործի նյութերում առկա փաստերի հիման վրա Դատարանը հաստատված չի համարում, որ առկա է Կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում: ...

ՎԵՐՈՊՐՅԱԼԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ

1. Վճռեց, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում առկա չէ,
2. Վճռեց, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում առկա չէ,
3. Վճռեց, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում առկա չէ,
4. Վճռեց, որ առկա է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում,
5. Վճռեց, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի վերաբերյալ դիմումատուի բողոքը քննելու անհրաժեշտություն չկա,
6. Վճռեց, որ առկա է Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում,
7. Վճռեց, որ Կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում առկա չէ,
8. Վճռեց,

(ա) որ պատասխանող պետությունը, սույն վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն վերջնական դաճալուց հետո երեք ամսվա ընթացքում, պետք է դիմումատուին վճարի ստորև նշված գումարները, գումարած դրանց կապակցությամբ վճարման ենթակա հարկերը,

(i) 1,000 եվրոյին (մեկ հազար եվրո) համարժեք թուրքական լիրա, որպես նյութական վնասի հատուցում՝ վճարման օրվա փոխարժեքով, որը պետք է փոխանցվի Թուրքիայում դիմումատուի բանկային հաշվին,

(ii) 5,000 եվրոյին (հինգ հազար եվրո) համարժեք թուրքական լիրա, որպես ոչ նյութական վնասի հատուցում՝ վճարման օրվա փոխարժեքով, որը պետք է փոխանցվի Թուրքիայում դիմումատուի բանկային հաշվին,

(iii) 7,000 եվրոյին (յոթ հազար եվրո) համարժեք թուրքական լիրա, որպես դատական ծախսերի հատուցում՝ վճարման օրվա փոխարժեքով, որը պետք է փոխանցվի Միացյալ Թագավորությունում դիմումատուի բանկային հաշվին, որը նշված է նրա արդարացի փոխհատուցման պահանջում,

(բ) Նշված երեք ամիսները լրանալուց հետո սահմանված գումարների տոկոսները պետք է գանձվեն Եվրոպական կենտրոնական բանկի միկրովարկերի տոկոսադրույքների համապատասխան՝ չվճարելու ժամկետի համար և հավելյալ երեք տոկոս.

9. Մերժել արդարացի փոխհատուցման վերաբերյալ դիմումատուի պահանջի մնացած մասը:

Կազմվել է անգլերեն և հրապարակվել գրավոր 2004 թվականի դեկտեմբերի 21-ին Դատարանների Կանոնների 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն:

Ս. Դոլլե
Քարտուղար

Ջ.-Փ Կոստա
Նախագահ